ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Սամվել Մարգարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Նիդեռլանդների Թագավորություն, Հաագա, 2017 թ. հունիսի 22-23

4. Հրավիրող կողմը

Միացյալ Ազգերի Կազմակերպության տնտեսական և սոցիալական հարցերով դեպարտամենտ

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն ՄԱԿ-ի պետական ծառայության ֆորումին և մրցանակաբաշխությանը

6. Քննարկված թեմաները

Մասնակցել եմ Հաագա քաղաքում տեղի ունեցած Միացյալ Ազգերի Կազմակերպության պետական ծառայությունների «Նորարարությունների կատարելագործում 2030 օրակարգին ընդառաջ» ֆորումին և մրցանակաբաշխության արարողությանը, որի ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը հաղթող է ճանաչվել ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերով դեպարտամենտի կողմից ամենամյա ՄԱԿ-ի պետական ծառայության մրցույթի «Առողջապահական ծառայությունների տրամադրման գործում նորարարություն և գերազանց որակ» անվանակարգում և զբաղեցրել առաջին տեղը՝ Հայաստանում մարդու իմունային անբավարարության վարակի՝ մորից երեխային փոխանցման վերացման համար:

Հունիսի 23-ին մասնակցել եմ ֆորումի շրջանակներում կազմակերպված նախարարական երկխոսության (հարց ու պատասխանի) միջոցառմանը, որն ուղղված էր «Կայուն զարգացման 2030թ. օրակարգով» սահմանված նպատակների իրականացմանը:

Նախարարական զրույցի խորագիրն էր՝ «Ինչպե՞ս խթանել նորարարությունները պետական ծառայության ոլորտում»: Ֆորումի մասնակիցներն առցանց համակարգի միջոցով հնարավորություն ունեցան ուղղելու նախընտրելի հարցերը նախարարական զրույցի մասնակիցներին: Հարցերը վերաբերում էին պետական կառավարման արդյունավետության բարձրացման ուղիներին, այլ երկրների փորձի տեղայնացման հնարավորությանը: Պատասխանելով ինձ ուղղված հարցերին՝ ներկայացրել եմ Հայաստանի առողջապահության բնագավառում ներկայիս բարեփոխումների ընթացքը, նորարական մոտեցումները: Նաև նշել եմ, որ ֆորումը լավ հարթակ է փորձի փոխանակման համար, մասնավորապես՝ առողջապահական էլեկտրոնային համակարգին անցնող Հայաստանի համար կարևոր է Իսլանդիայի այդ ոլորտում արդեն իսկ ունեցած փորձի կիրառումը: Նշել եմ նաև, որ Հայաստանը պատրաստ է մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման գործում ունեցած հաջողության փորձը փոխանակել այլ երկրների գործընկերների հետ:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումի ժամանակ տեղի ունեցան մի շարք ինտերակտիվ միջոցառումներ, պլենար և զուգահեռ թեմատիկ նիստեր, կլոր սեղան-քննարկումներ: Որպես ՄԱԿ-ի ամենամյա պետական ծառայության մրցանակ ստացող, ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը «Առողջապահական ծառայությունների տրամադրման գերազանց որակ» թեմատիկ նիստի ընթացքում հանդես եկավ ներկայացումով, ցուցադրվեց վերը նշված թեմայով նկարահանված տեսահոլովակ:

Ֆորումի և մրցանակաբաշխության շրջանակում կազմակերպված «Նորարարությունների տոնավաճառում» Հայաստանին տրամադրված առանձին տաղավարում ներկայացվեցին մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վերացման գործում երկրի փորձը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ոլորոտում ձեռքբերումները և իրականացվող աշխատանքները:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ֆորումի ավարտին տեղի ունեցավ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերով դեպարտամենտի կողմից ամեն տարի հայտարարվող ՄԱԿ-ի պետական ծառայության մրցույթի հաղթողների պարգևատրման արարողություն, որի ժամանակ ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնին՝ որպես «Առողջապահական ծառայությունների տրամադրման գործում նորարարություն և գերազանց որակ» անվանակարգում հաղթած և առաջին տեղը զբաղեցրած կազմակերպության, հանձնվեց գավաթ և հավաստագիր պետական ծառայության տրամադրման գործում նորարարության և գերազանց որակի միջոցով Կայուն զարգացման 2030թ. օրակարգի իրականացմանն աջակցելուն ուղղված ներդրման համար:

9. Գործուղվողները

Սամվել Մարգարյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Սամվել Գրիգորյան	ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տնօրեն
Հասմիկ Հարությունյան	ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար
Արևիկ Պետրոսյան	ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի աշխատակից

10. Ստորագրությունը, ամսաթիվը

27 հունիսի 2017 թ.